ունկամբ, լոիցէ թիկամբ», — «ծառայ, որ ոչ գիտիցէ զկամս տէառն եւ արժան ինչ գանի գործիցէ, արբցէ գան սակաւ, իսկ որ գիտիցէ եւ մեղիցէ արբցէ գան բազում», — «դառն է ծառ խրատու, իսկ պտուղ նորա քաղցր»... Խրատելու այդ գործիքն առանձնապէս պատրաստւում էր վարժապետների համար, եւ տէր Թոդիկը՝ իր ունեցածը, որպէս պատմում էր, ընծայ էր ստացել իր վարժապետից, որպէս յիշատակ եւ որպէս նշան իր մեծաքայլ յառաջադիմութեան:

Պատիժների մէջ մինչեւ այսօր չեմ մոռացել մէկը, որը որքան ծիծաղելի, այնքան էլ սարսափելի էր: Աշակերտին կանգնեցնում էին ոտքի վրայ եւ երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղիւս կամ ահագին Այսմաւուրքը: Նա ժամերով, հնդկական ֆակիրի նման, այդ ծանր գիրքը պէտք է պահէր գլխից բարձր, երկու ափերի մէջ: Թեւքերը յոգնում էին, ջղերը թուլանում էին, բայց այդ ոչինչ: Գլխաւոր տանջանքը նրանումն էր, որ յանցաւորը պէտք է կանգնէր մէկ ոտքի վրայ. միւս ոտքը գետին դնելու համարձակութիւն չունէր: Սովորաբար ընտրում էին ձախ ոտքը, իսկ աջը պէտք է վեր բարձրացած պահէր: Մի աշակերտ մտրակը ձեռին կանգնած էր նրա մօտ, հսկում էր այդ անտանելի մարմնամարզութեան վրայ: Երբ պատահում էր յանցաւորին ոտքը գետին դնել, նա իսկոյն մտրակով զարկում էր ոտին: Այդ սատանայական պատժին ես այն աստիճան սովորած էի, որ երկար կարողանում էի սագի նման մէկ ոտքի վրայ կանգնած մնալ:

Մեր դպրոցն ունէր իր ուրիշ խստութիւնները:

Վաղ-առաւօտեան պէտք է դասատուն գայինք բոլորովին անօթի, առանց մի պատառ հաց անգամ բերան դնելու: Թէյի կամ սուրճի գործածութիւնը այն ժամանակ դեռ մեր երկրում մտած չէր: Իսկ եթէ մեր տներում գտնուած թանից կամ մածունից նախաճաշիկ անէինք, դրա համար սաստիկ պատիժներ էին նշանակուած: Վարժապետն ասում էր. «կուշտ փորով չէ կարելի դաս սովորել, երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակասում է»: Եւ նա օրինակ էր բերում ճգնաւորներին, վարդապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից գրքեր էին շարադրում:

Յիշեալ պատոերը մենք կատարում էինք ամենայն ճշտութեամբ. զեղծումներ անել նրա դէմ անկարելի էր, որովհետեւ վարժապետը սատանայի պէս իմանում էր, երբ աշակերտը մի բան կերած էր լինում: Ահա ինչպէս էր իմանում. նախ քան ուսման սկսիլը, վարժապետը ո՛ր աշակերտի վրայ կասկած ունէր՝ սկսում էր նրա լեզուն քննել, որ տեսնէ, արդեօք նա իր ծոմը լուծել էր, թէ ոչ: Յայտնի բան է, անսոսաղ մարդու լեզուն աւելի սպիտակ գոյն է ունենում. նրա մակերեւոյթի վրայ ճերմակ փառ է նստած լինում. իսկ երբ